# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 նոյեմբերի 2021 թվականի N 121-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի N 01 //08759-2021 գրությունը, ***որոշում եմ***.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տարածքում զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ.ԿՈՆԴՅԱՆ

2021 թվականի նոյեմբերի 9
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի
2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 121-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Բնակավայրի հասցե |
|---|---|---|
| 1 | Աշոցք | Ղազանչիի խճ., թիվ13, «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի հարակից տարածք |
| 2 | Սարագյուղ | Հայաստանյանց Առաքելական Սուրբ եկեղեցու հարևանությամբ |
| 3 | Բավրա | Գյումրի-Նինոծմինդա, թիվ 13, վարչական շենքի հարակից տարածք |
| 4 | Թավշուտ | 1փ., 2անց., թիվ1, վարչական շենքի հարակից տարածք |
| 5 | Սիզավետ | 3փ., թիվ 5,, վարչական շենքի հարակից տարածք |
| 6 | Ղազանչի | Ղազանչիի մշակույթի տան հարևանությամբ |
| 7 | Մեծ Սեպասար | Մեծ Սեպասարի մշակույթի տան հարևանությամբ |
| 8 | Փոքր Սեպասար | «Փոքր Սեպասար տարրական դպրոց» ՊՈԱԿ –ի շենքի հարակից տարածք |
| 9 | Կրասար | Կրասարի հին դպրոցի շենքի հարակից տարածք |
| ք | Զույգաղբյուր | Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի հարակից տարածք |
| 11 | Կարմրավան | «Կարմրավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի շենքի հարակից տարածք |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ.ԿՈՆԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2021 թվականի N 122-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 62-Ն որոշման 2-րդ մասը , ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեի հոդվածներում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1. Ծախսային մաս, ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝

1) բաժին 1, խումբ 6, դաս 1, հոդված 5129՝ «400.0» թիվը փոխարինել «380.0» թվով,

2) բաժին 1, խումբ 6, դաս 1, հոդված 5134՝ «800.0» թիվը փոխարինել «820.0» թվով,

3) բաժին 4, խումբ 3, դաս 2, հոդված 5113՝ «15500.0» թիվը փոխարինել «15180.0» թվով,

4) բաժին 4, խումբ 3, դաս 2, հոդված 5134՝ «5100.0» թիվը փոխարինել «5420.0» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ.ԿՈՆԴՅԱՆ**

2021 թվականի նոյեմբերի 12
գյուղ Աշոցք